Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1126-15.07.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-95-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) Հավելված 1-ի ցանկում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն» բառերը փոխարինել՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե» բառերով:

Հոդված 2. Օրենքի Հավելված 1-ի ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1.-ին կետով.

«

29.1.	90127	«Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ	ք. Երևան, Նալբանդյան փող. 28

»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՑԱՆԿ
2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՆԱԽՈՐԴ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ)

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե			
7.	90102	«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ	ք. Երևան, Օրբելի 41
8.	90103	«Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ	ք. Երևան, Աշտարակի խճուղի 30
9.	90104	«Սևակ և Սաթինե» ՍՊԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Երևան, Արղության 10
10.	90074	«Ավտոմատիկա» ՓԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Երևան, Թևոսյան 3/1
11.	90105	«Ընդունելությունների տուն» ՓԲԸ	ք. Երևան, Մաշտոցի 47
12.	90051	«Հրազդանի մարզահամալիր» ՓԲԸ	ք. Երևան, Հրազդանի կիրճ 4
13.	90057	«Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ	ք. Երևան, Շիրակի 39
14.	21876	«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Երևան, Արշակունյաց 12
15.	21805.1	«Կապուտակ» ՓԲԸ	Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Առափնյա գոտի
16.	74593	«Հայառշինվերանորոգում-1» ՓԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Երևան, Գլինկայի 7
17.	74730	«Երառսպասարկում» ՓԲԸ	ք. Երևան, Խորենացու 26ա
18.	60347	«Երևանի ջրամատակարարման ուղեմաս» ԲԲԸ	ք. Երևան, Արցախի 40
19.	62132	«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ	ք. Երևան, Կոմիտասի 49
20.	62130	«Ընդերքաբան» ԲԲԸ	ք. Երևան, Չարենցի 46
21.	20370	«Բյուրեղ» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Կոտայքի մարզ, գ. Բջնի
22.	62308	«Իջևանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Տավուշի մարզ, գ. Աչաջուր
23.	61110	«Ախուրյանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Ախուրյան խճուղի
24.	61100	«Անիի «Ագրոսպասարկում» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	Շիրակի մարզ, գ. Մարալիկ
25.	61138	«Վարդենիսի «Բերրիություն» ԲԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Վարդենիս, Չարենցի փ.
26.	21843	«Դվին կոնցեռն» ՓԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Երևան, Արշակունյաց 67
27.	62127	«Ջրհան» ՓԲԸ	Արմավիրի մարզ, գ. Գեղակերտ
28.	62021	«Արաքս» ՓԲԸ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	ք. Երևան, Գ. Նժդեհի 37/8
29.	90038	«Երվերելակ» ՓԲԸ	ք. Երևան, Մասիսի նրբ. 13
«29.1.	90127	«Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ	Ք. Երևան, Նալբանդյան փողոց 28
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե			
30.	90106	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության ԳՏԿ» ՓԲԸ	ք. Երևան, Տիգրան Մեծի 4

Կ-1126-15.07.2025-ՏՀ-011/1

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Տեղեկանք
փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Կ 1126 15.07.2025 ՏՀ 011/1

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-95-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) Հավելված 1-ի ցանկում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն» բառերը փոխարինել՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե» բառերով:

Հոդված 2. ~~«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-95-Ն օրենքի~~ Օրենքի Հավելված 1-ի ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1.-ին կետով.

«

«29.1.	90127	«Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ	ք.Երևան, Նալբանդյան փող. 28»

»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1126-15.07.2025-ՏՀ-011/1 PARLIAMENT.AM) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՆԱԽԱԳԻԾ) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	***Կառավարություն***	1-ին հոդվածի 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «օրենքի» բառից հետո առաջարկվում է լրացնել «(այսուհետ՝ Օրենք)» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***Կառավարություն***	**2-րդ հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-95-Ն օրենքի» բառերն առաջարկվում է փոխարինել «Օրենքի» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	***Կառավարություն***	**2-րդ հոդվածի 1-ին մաս**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «29.1.» թվից առաջ կիրառված չակերտն առաջարկվում է նախատեսել աղյուսակից առաջ, իսկ «28» թվից հետո կիրառված չակերտը՝ աղյուսակի վերջում, միաժամանակ չակերտից հետո առաջարկվում է լրացնել «:» կետադրական նշանը՝ պաշտոնական ինկորպորացման անհնարինությունից խուսափելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է: